Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՂԱՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎԻԶՄԸ ԵՎ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քաղաքացիական նախաձեռնությունները Հայաստանում լինելով առաջին հայացքից առանձին հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողություններ ձևավորել են մի դաշտ, որը առանձնանում է իր յուրահատկությամբ ինչպես քաղաքական դաշտից, այնպես էլ հասարակական կազմակերպությունների:Դրանց գործունեության արդյունքում ներկայումս առկա է մի գործընթաց, որն ուղղված է քաղաքացու ձևավորմանը: Այս նախաձեռնությունների շնորհիվ ձևավորված փոխհարաբերությունների մշակույթն իր բնույթով լինելով դաշտային, ներգրավման լայն հնարավորություններ է ստեղծում թե առանձին անհատների և թե խմբերի համար: Ներկայումս այս նախաձեռնությունները կարիք ունեն մի շարք նոր քայլերի իրականացման, որոնցից առանցքային են իշխանության կլանային տիպը քաղաքացիական փոփոխելու ռազմավարությունը: Այս նախաձեռնությունների զարգացմանը նպաստեցին նոր սոցիալական տեխնոլոգիաները: Ներկայումս կարևոր խնդիրներից է այդ տեխնոլոգիաները օգտագործել վիրտուալ տարածքներում քաղաքացիական միջավայրերի ձևավորումը և վիրտուալ ու իրական տարածքների միջև գործոն փոխադարձ կապերի հաստատումը[1]:

---

[1] Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ N 17862: Հոդվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Հայաստանում 2008 թվականից ի վեր ի հայտ եկավ ակտիվության մի ձև,որը էականորեն տարբերվում էր մինչ այդ քաղաքական ընդիմադիր ուժերի կողմից կազմակերպված ձևերից: Այն տարբերվում էր նաև հասարակական կազմակերպությունների գործունեության ձևերից: Խոսքը քաղաքացիական նախաձեռնութունների աճի մասին էր, որը հատկապես մեծ թափ ստացավ 2010 թվականից ի վեր:

Այս նախաձեռնությունները կազմակերպվում էին երիտասարդ տարիքի, քաղաքացիական հստակ կեցված ունեցող մարդկանց կողմից, ովքեր դուրս էին գալիս կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ խոշոր բիզնեսի այս կամ այն անօրինական ու անարդար գործարքի դեմ և օրենքի անունից պահանջում դադարեցնել այն: Այս ճանապարհով հնարավոր եղավ գրանցել մի քանի հաջողություններ, որոնոցում հիշատակելի է Երևանի Նոր Նորքի վարչական տարածքում գտնվող Վիշապների պուրակի պայքարը, Թռչկանի ջրվեժի պահպանման, Մաշտոցի պուրակի վերականգման, ուղեվարձերի թանկացման դեմ քաղաքացիական նախաձեռնությունները:

Այս նախաձեռնությունների և նրանց կողմից ձևավորված դաշտի հետազոտումը թույլ է տալիս ասել, որ առանձին վերցրած այդ նախաձեռնությունները իրականում դժվար է գնահատել, որպես զուտ անջատ անջատ հանդես եկող նախաձեռնություններ, որոնցից ամեն մեկը լուծել է իր լոկալ խնդիրը և այդքանով ավարտվել: Դրանք մի ընդանուր երևույթի դրսևորումներ են: Ըստ էության, այդ երևույթն իր բնույթով քաղաքացիական շարժում է, որը սակայն որպես այդպիսին *դեռևս չի ձևակերպել ինքն իրեն և չի սահմանել իր կոլեկտիվ ինքնությունը*:

Քաղաքացիական նախաձեռնությունների հիմնական ձեռքբերումները և նշանակությունը

Քաղաքացիական նախաձեռնությունների ի հայտ գալը մի քանի կարևոր նշանակություն ունեցավ: Նախ, դրանք ընդլայնեցին իշխանության հետ փոխհարաբերվելու քաղաքացիական հասարակության հնարավորությունները.

- Փորձը ցույց տվեց, որ քաղաքացիական նախաձեռնության մասնակիցները ավելի հաջող են մտնում իշխանության հետ երկխոսության մեջ, երբ նրանք մնում են քաղաքացիական դիսկուրսի հարթությունում: Ընդդիմադիր քաղաքական ուժերից քաղաքացիական նախաձեռնությունների հիմնական տարբերությունն այն է, որ

իրենք ստեղծում են դաշտային հարաբերություն, ի տարբերություն քաղաքական ուժերի, որոնք ձևավորում են գծային փոխհարաբերություն, ինչի մի կողմում ընդիմությունն է գլոբալ իշխանափոխության պահանջով, մյուս կողմում, իշխանական ուժերը՝ իշխանությունը պահելու վճռականությամբ:

- Դաշտային հարաբերությունը իր բնույթով բաց է, հորիզոնական ու ավելի մեծ ազատություն է տալիս մասնակցին: Դաշտի պրոցեսներին կարող է մասնակցել ցանկացած մարդ: Կարելի է ասել, որ *քաղաքացիական նախաձեռնությունները դրանք ներդրումային դաշտեր ձևավորող ակտիվություններ են:* Դրանք ձևավորում են դաշտեր, որտեղ կարող են ներդրվել ինչպես անհատ քաղաքացիներ, այնպես էլ քաղաքական ուժեր: Այդ նախաձեռնություններն ունեն նպատակ, մեթոդաբանություն: Եվ եթե նպատակն ու մեթոդաբանությունը պահպանվում է, ապա ձևավորվում է դաշտ և հայտնվում են ներդրողներ:
- Քաղաքացիական նախաձեռնությունները պահանջում են զիջել ոչ թե ողջ իշխանությունը, այլ՝ զիջման գնալ առանձին վերցրած մի որևէ խնդրի մեջ: Սա թույլ է տալիս երբեմն ներքաշել իշխանությանը քաղաքացիական նախաձեռնության ձևավորած իրական դաշտ և հասնել խնդրի լուծմանը:
- Քաղաքացիական նախաձեռնությունները ցույց տվեցին, որ կարելի է իշխանության հանդեպ հաղթանակ տանել փոխելով նրա պրակտիկաները:
- Քաղաքացիական նախաձեռնությունների արդյունքում Հայաստանի հասարակական կյանքում ի հայտ եկան նաև նոր դիսկուրսներ: Նոր դիսկուրսներից կարևոր է հատկապես քաղաքացիական դիսկուրսը՝ ով է քաղաքացին, ինչպես է նա հարաբերվում իշխանության հետ և փոխում նրա բնույթը: Այս դիսկուրսները ծավալվեցին հենց նախաձեռնությունների ընթացքում և ուղեկցվեցին դրանք ներկայացնող գործունեության ձևերով, որոնք մի շարք դեպքերում գրանցելով հաջողության, նպաստում են փոխելու հասարակության կրավորական հիմքը հանդիսացող, ԽՍՀՄ շրջանից արմատավորված “մեր ձեռքն ինչ կա որ, մենք ինչ անենք: Մենք ոչինչ չենք կարող անել” դիսկուրսը “Մեր կյանքը մենք պետք է փոխենք”, “որոշողը մենք ենք”, “երկիրը պատկանում է նրա քաղաքացուն, իսկ իշխանությունը պետք է ոչ թե տիրի, այլ ծառայի քաղաքացուն”, “իրավունքը և օրենքը գերակա են իշխանավորից” և այլ նման բովանդակության,
- Փոխվեցին նաև դիսկուրսիվ պրակտիկաները: Կոտրվեց ԽՍՀՄ-ից ժառանգված այն մտայնությունը, որ իրական դիսկուրսը դա իշխանության դիսկուրսն է, իսկ հասարակ մարդիկ չեն կարող դիսկուրս ծավալել և պետք է պարզապես վերարտադրեն իշխանության դիսկուրսը առօրեականության մեջ և առօրեականության պրակտիկաներում: Դրա փոխարեն, ի հայտ եկավ որ իրական դիսկուրսներ կարող են ձևավորել քաղաքացիները և քաղաքացիական դիսկուրսները գերակա են իշխանության դիսկուրսներին, քանի որ ներկայացնում են քաղաքացիների կողմից ձևակերպվող հանրային շահերը,
- Քաղաքացիական նախաձեռնությունների արդյունքում ի հայտ եկավ աննախադեպ մի երևույթ՝ առաջին անգամ Հայաստանի ողջ պատմության մեջ ձևավորվեց հանրային միջավայր: Այսինքն, մի միջավայր, որտեղ կարող է տեղի ունենալ

դիսկուրս: Որտեղ կարող են հավաքվել մի քանի մարդ և կազմակերպել ռացիոնալ կերպով փաստարկված խոսքի փոխանակում: Սա այն միջավայրն է, որտեղ ձևավորվում է քաղաքացիականությունը և քաղաքացին՝ մարդը, ով ունի կարծիք և այդ կարծիքը հանրայնորեն ներկայացնելու կամք,

- Քաղաքացիական նախաձեռնությունները կարողացան ճկուն կերպով հարմարվել առցանց գործող ժամանակակից տեխնոլոգիաներին և օգտագործել դրանց ռեսուրսները կազմակերպչական և տեղակատվական նպատակներով,
- Այն նաև հարմար վերլուծական հարթակ է ընթացիկ հարցերի քննարկման առումով
- Հայաստանում իրականացվող քաղաքացիական նախաձեռնությունների համար հատկապես կիրառական նշանակություն ունի Ֆեյսբուք սոցիալական ցանցը,
- Ֆեյսբուքին նախընտրություն տալը ունի մի քանի հիմնական պատճառներ Նախ, այն հավասարություն է ստեղծում մասնակիցների միջև մի շարք հարցերում.
    - կազմակերպելու,
    - քննադատելու,
    - կարծիք հայտնելու և ձայնը լսելի դարձնելու,
    - իրազեկելու և իրազեկվելու,
    - գործընթացներին հետևելու:

Ֆեյսբուքը նաև քաղաքացիական շարժումներ կազմակերպելու ռեսուրս է, որի դեմ իշխանությունը գործիքներ չունի: Եթե իհարկե չդիմի դրա վրա արգելք դնելու ծայրահեղ ավտորիտար ձևին:

Գրանցված հիմնախնդիրները

Վերը ներկայացված ձեռքներումների ու դրական կողմերի հետ միասին կան նաև որոշ հիմնախնդիրներ: Քաղաքացիական նախաձեռնություններից շատերը չեն հաջողում: Դրա պատճառը ոչ թե վատ առաջարկն է կամ այդ առաջարկը կառավարությանը ներկայացնելու հմտությունը, այլ՝ կառավարությունում հանրային կարևորություն ունեցող դրական առաջարկների հանդեպ շահագրգռության և քաղաքական կամքի անբավարարությունը: Դրան գումարվու մ է նաև այնպիսի մի գլոբալ պատճառ, ինչպիսին ներկայիս հասարակության քաղաքացիական թույլ մշակույթը և ընդհանրապես քաղաքացիների պակասն է: Նշված պատճառներով ձևավորել է իշխանության դիսբալանս՝ հօգուտ իշխանության այն տեսակի, որը կլանային է:

Կլանային իշխանության տիպը տիրապետող է լայն առումով հենց այն պատճառով, որ հասարակական փոխհարաբերությունների բնույթը նույնպես

կլանային են: Հայաստանում ոչ միայն պետական կառավարման, այլ հենց հասարակության մեջ լայն առումով տիրապետող է իշխանության կլանային տիպը, այլ՝ ոչ քաղաքացիական: Դա նշանակում է, որ հասարակությունում խոսքի փոխանակումը հիմնականում իրականացվում է ոչ հանրային տարածքներում, ինչը նպաստում է իշխանության կլանային տիպի վերարտադրությանը: Իդեպ, *սա այն հիմնական պատճառներից է, որը լճացնում է քաղաքացիական նախաձեռնություններից շատերը*:

Շատ քաղաքացիական նախաձեռնություններ ավելի նկատելի դարձրեցին արդի հայաստանյան հասարակության ներսում իշխանության երկու տարբեր տեսակների՝ կլանային իշխանության և նոր կազմավորվող քաղաքացիական իշխանության ձևերի բախման փաստը:

Հետևաբար, մեր առաջարկներից մեկը այն է, քաղաքացիական նախաձեռնությունները իրենց ծրագրերում ավելի մեծ կարևորություն տան հանրային տարածքի/միջավայրի ձևավորման բաղադրիչին: *Քաղաքացիական նախաձեռնությունների մարտավարությունում և դրանից բխող խնդիրներում ու միջոցառումներում միշտ պետք է ունենալ գործողությունների մի փաթեթ, որն ուղղված է* ***խոսքի փոխանակությունը փակ միջավայրերից հանրային միջավայր տեղափոխելուն***: Սա թույլ կտա.

- ձևավորել *հանրային միջավայրեր*, որտեղ իշխանության կլանային պրակտիկաների ազդեցիկությունը զիջում է քաղաքացիականին,
- ձևավորել ***քաղաքացիներ***, *ովքեր խոսքի փոխանակումը իրականացնում են հանրային միջավայրերում*, ինչի շնորհիվ նրանք փոխում են իշխանության մասին իռացիոնալ փաստարկի հիման վրա կառուցվող դիսկուրսները ռացիոնալ փաստարկի վրա կառուցվող դիսկուրսի,
- հանրային *միջավայրերում նոր դիսկուրսիվ պրակտիկաների կիրառումը կարող է նպաստել փոխելու հասարակությունում իշխանություն իրացնող ու ձևավորող սուբյեկտին*: Ընտանեկան, թաղային հարևանական ազգարյունակացական կլանի անդամին, որպես իշխանություն իրացնող ու ձևավորող նոր սուբյեկտ հակադրել ***քաղաքացուն***:

Հայաստանում ներկայումս քաղաքացիական ակտիվության տիրապետող ձևը քաղաքացիական նախաձեռնությունն է: Սակայն այս ոլորտում կան այնպիսի հիմնարար խնդիրներ, ինչպես ասենք, քաղաքացու ձևավորումը, հանրային միջավայրերի ձևավորումը, երկխոսության մշակույթի ձևավորումը, ռացիոնալ

փաստարկի հիման վրա խոսքի փոխանակության կազմակերպումը, հասարակությունում իշխանության սուբյեկտի փոփոխությունը, որոնք հնարավոր չէ իրագործել քաղաքացիական նախաձեռնությունների ֆորմատում:

Առկա է նաև մարդկային ռեսուրսների պակաս: Խնդիրն ունի քանակական և որակական առումներ: Նախ, կարիք է զգացվում պարզապես քանակապես ավելացնել քաղաքացիական ակտիվ կեցվածք ունեցող երիտասարդների թիվը: Մյուս կողմից ոլորտում առկա ակտիվիստները կարիք ունեն որակական աճի, ինչը ներառում է մեթոդների ճանաչումը, տեսական գիտելիքի աճը, վերլուծական ու ռեֆլեքսիվ ունակությունների զարգացումը: Այս առումով, կարևոր է դասընթացների իրականացումը:

Մյուս կարևոր խնդիրը, քաղաքացու ձևավորումն է, որը շատ բազմակոմպոնենտ խնդիր է, որն փոխկապված է ինչպես վերն արված առաջարկների իրականացման, այնպես էլ դրան ուղղված ***քաղաքացիական շարժման*** նախաձեռման լուրջ խնդրի հետ: Քաղաքացու ձևավորումը դա գործընթաց է, որը կարող է տևել տարիներ և առանց շարժման ձևավորման դա շատ դժվար իրանանալի խնդիր է: Դա գործընթաց է, որ կարող է համակարգային փոփոխություններ առաջացնել հասարակության և իշխանության բնույթում ու կառուցվածքում:

Քաղաքացիական նախաձեռնությունների և շարժումների հաջողությունը պայմանավորող կարևոր գործոնը ***կոլեկտիվ ինքնության*** ձևավորումն է:

Կարևոր է նաև այդ ինքնությանը համարժեք ***նշանների ձևավորումը և ռեպրեզենտացումը հանրայնորեն նշանակալի վայրերում և այդ վայրերի քաղաքացիականացումը***: Այս առումով կարևոր միջոցառումներից կարող է լինել քաղաքացիական նշանների արտադրության ու դրանց ռեպրեզենտացման վայրերի ու ռեպրեզենտացման ձևերի ընտրությունը:

Հանրային միջավայրերը կարող են ձևավորվել ոչ միայն իրական, այլ նաև վիրտուալ տարածքներում: Վիրտուալ սոցիալական տարածքները նպաստավոր են հանրային միջավայրեր ձևավորելու համար, քանի որ բնույթով բաց են ու ցանցային: Այստեղ նպաստավոր պայմաններ կան հանրային միջավայրերը ցանցային եղանակով կազմակերպելու և իրական տարածքներ դրանք տեղափոխելու:

Քաղաքացիական շարժումների համար շատ կարևոր է իրաան և վիրտուալ տարածքների զուգակցումը և մի տարածքից մոյսը անընդհատ տեղափոխումը: Կազմակերպչական տեսանկյունից դա նրան կարող է դարձնել շատ ճկուն:

Դրանց գործադրումը կարող է նպաստել խոսքի փոխանակման հանրային միջավայրերի ձևավորման գործընթացներ ներգրավել մարդկանց, ովքեր, տարբեր պատճառներով ֆիզիկապես չեն կարող հայտնվել իրական տարածքներում:

Այսինքն, սոցիալական ցանցերը կարող են ծառայել քաղաքացու ձևավորման գործընթացին և քաղաքացիական շարժումը կարող է նաև իրականացվել նոր տեխնոլոգիաների կողմից ստեղծված վիրտուալ տարածքներում: Այս առումով անհրաժեշտ է վիրտուալ տարածքում նույնպես պահպանել այն հիմնական պայմանները, որոնք խոսքի փոխանակումը վեր են ածում ռացիոնալ փաստարկման հիման վրա իրականացվող երկխոսության: Դրանք հետևյալներն են.

1. քննարկման մասնակիցներից ոչ ոք չպետք է հեռացվի դիսկուրսից
2. դիսկուրսի մասնակիցներից բոլորը իրենց խոսքը ներկայացնելու և ճշմարիտ ու արդար ճանաչվելու հավակնության հավասար իրավունքներ ունեն,
3. մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է պատրաստ լինի ընդունելու մյուսի արդար լինելու հավակնությունը
4. մասնակիցների միջև իշխանության տիրապետման տարբերությունները պետք է չեզոքացվեն այնպիսի եղանակով, որ տարբերությունը չազդի կոնսենսուսի կայացման վրա,
5. մասնակիցները պետք է թափանցիկ կերպով հայտարարեն իրենց նպատակները և ձեռնպահ մնան ստրատեգիական բնույթի գործողություններից : Կարևոր է նաև, որ չլինեն ժամանակային սահմանափակումներ: